ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N2680 - Ա **16 ապրիլի 2009թ.**

ԱՂԲՅՈՒՐ ՍԵՐՈԲԻ ՓՈՂՈՑԻ Հ. 28 ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԲՈՒՐԱՍՏԱՆ ԴԱՎԹԻ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ, ՌՈՒՇԱՆ ԱՐՏԱՎԱԶԴԻ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ, ՌՈՒԶԱՆՆԱ ԱՐՏԱՎԱԶԴԻ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ, ԳԱԳԻԿ ԱՐՏԱՎԱԶԴԻ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ, ՊԵՏՐՈՍ ԳԱՍՊԱՐԻ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, 263.58ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Բուրաստան Դավթի Պետրոսյանի (ծնված 15.06.1934թ.), Ռուշան Արտավազդի Պետրոսյանի (ծնված 22.08.1961թ.), Ռուզաննա Արտավազդի Պետրոսյանի (ծնված 19.02.1960թ.), Գագիկ Արտավազդի Պետրոսյանի (ծնված 20.07.1956թ.), Պետրոս Գասպարի Պետրոսյանի (ծնված 26.01.1949թ.) դիմումը: Տեղագրական հանույթի ճշգրտումից պարզվել է, որ Աղբյուր Սերոբի փողոցի հ.28 հասցեում ընդհանուր հողամասի մակերեսը փաստացի կազմում է 1103.58քմ, որից Բուրաստան Դավթի Պետրոսյանին, Ռուշան Արտավազդի Պետրոսյանին, Ռուզաննա Արտավազդի Պետրոսյանին, Գագիկ Արտավազդի Պետրոսյանին, Պետրոս Գասպարի Պետրոսյանին սեփականության իրավունքով պատկանում է 540քմ մակերեսով հողամաս: Օրինական հողամասին կից օգտագործվող 563.58քմ մակերեսով հողամասից օրենքի ուժով 300քմ մակերեսով հողամասը կարող է փոխանցվել անհատույց սեփականության իրավունքով, իսկ 263.58քմ մակերեսով հողամասը կարող է օտարվել ուղղակի վաճառքի միջոցով:

Հաշվի առնելով, որ բնակելի տունը կառուցվել է մինչև 1975 թվականը, 14.06.2006թ. ժառանգության իրավունքի վկայագիրը, 14.06.2006թ. սեփականության իրավունքի վկայագիրը, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Արաբկիր տարածքային ստորաբաժանման 07.11.2008թ. հ.5031ա, Երևանի քաղաքապետարանի <<Հողի և ունեցվածքի գործառնություններ>> ՊՓԲԸ-ի 10.04.2009թ. հ.20/2-Ե/220 գրությունները, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 10.03.2009թ. հ.20-Ել-1656 եզրակացությունը, համաձայն որի Աղբյուր Սերոբի փողոցի հ.28 բնակելի տան զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ հողամասը համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 2, 3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, ղեկավարվելով <<Երևան քաղաքում իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի <<Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին>> հ.2387-Ն որոշմամբ.

1. Վերականգնել Աղբյուր Սերոբի փողոցի հ.28 հասցեում Բուրաստան Դավթի Պետրոսյանի, Ռուշան Արտավազդի Պետրոսյանի, Ռուզաննա Արտավազդի Պետրոսյանի, Գագիկ Արտավազդի Պետրոսյանի, Պետրոս Գասպարի Պետրոսյանի հողօգտագործման իրավունքը բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 540քմ մակերեսով հողամասին կից 300քմ մակերեսով հողամասի չափով՝ ճանաչելով նրանց սեփականության իրավունքը 300քմ մակերեսով հողամասի և 563.58քմ մակերեսով հողամասի վրա գտնվող շենք-շինությունների նկատմամբ:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված 300քմ մակերեսով հողամասից ավել օգտագործվող 263.58քմ մակերեսով հողամասը տարածագնահատման 4-րդ գոտու կադաստրային արժեքով ուղղակի վաճառքի միջոցով օտարել Բուրաստան Դավթի Պետրոսյանին, Ռուշան Արտավազդի Պետրոսյանին, Ռուզաննա Արտավազդի Պետրոսյանին, Գագիկ Արտավազդի Պետրոսյանին, Պետրոս Գասպարի Պետրոսյանին:

3. Լիազորել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետին՝ Երևանի քաղաքապետի անունից հողօգտագործողների հետ կնքել հողամասի առուվաճառքի պայմանագիր:

4. Շենք-շինությունների մակերեսները ենթակա են ճշտման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Արաբկիր տարածքային ստորաբաժանման կողմից:

5. Հողամասի սահմանները որոշվում են Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության կողմից տրված միասնական գլխավոր հատակագծով:

6. Աղբյուր Սերոբի փողոցի հ.28 հասցեի բնակելի տանը տրամադրել հասցե՝ <<Աղբյուր Սերոբի փողոցի հ.28 տուն>>:

7. Նախազգուշացնել հողօգտագործողներին, որ հողամասի առուվաճառքի պայմանագիրը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի և <<Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին>> ՀՀ օրենքի համաձայն ենթակա է նոտարական վավերացման, իսկ դրանից ծագող իրավունքները՝ 30-օրյա ժամկետում պետական գրանցման:

8. Առաջարկել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Արաբկիր տարածքային ստորաբաժանմանը գրանցել քաղաքացիներ Բուրաստան Դավթի Պետրոսյանի, Ռուշան Արտավազդի Պետրոսյանի, Ռուզաննա Արտավազդի Պետրոսյանի, Գագիկ Արտավազդի Պետրոսյանի, Պետրոս Գասպարի Պետրոսյանի սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի նկատմամբ, տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական՝ լուծելով գույքագրման արդյունքում հաշվառված անշարժ գույքի խնդիրները:

9. Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարության պետին՝ սույն որոշման օրինակները 5-օրյա ժամկետում առաքել Արաբկիր թաղապետարան:

10. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի վրա:

11. Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Ա. Սարգսյանի վրա:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ